ՄԻՐԶԱ ՄԱԼՔՈՄ ԽԱՆԻ ՄԱՍՈՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ *

Ֆելիքս Մովսիսյան

Բանալի բառեր՝ *լուսավորիչ, բարեգործ, պետական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս, «Ֆարամուշ խանե», մասոն, օթյակ, «Կանուն»:*

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի իրանական ականավոր պետական և հասարակական գործիչ, լուսավորիչ-բարեգործ, դիվանագետ, հրապարակախոս, իրանական սահմանադրական հեղափոխության հայր Միրզա Մալքոմ խանը (1833-1908) իր ժամանակի լուսավորյալ մարդկանցից ու երևելի դեմքերից է: Նրա անձի ու գործունեության նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր դեռևս կենդանության օրոք [1], որը չթուլացավ նաև հետագայում և մեր օրերում[2]: Խորհրդային տարիներին լույս տեսած մի շարք ուսումնասիրություններում ներկայացվել են Մալքոմ խանի սերտ կապերը իրանական լուսավորիչների հետ[3] ՝ լրագրողական, հրապարակախոսական[4] և գրական գործունեությունն ու ժառանգությունը[5], ներդրումը՝ իրանական թատրոնի[6], գրականության և, հատկապես արձակի զարգացման գործում[7]: 19-րդ - դարի վերջին 20-րդ դարի սկզբին Իրանում գաղափարական պայքարի պատմության շրջանակներում ուսումնասիրվել են Մալքոմ խանի հասարակական-քաղաքական հայացքները և գործունեությունը[8]: Չնայած այդ աշխատանքների հեղինակներից ոմանք խորհրդային տարիներին անկաշկանդ գրում էին, որ Մալքոմ խանը մասոն էր և համարվում է Իրանում առաջին մասոնական օթյակի հիմնադիրը, բայց և այնպես նրա մասոնական գաղափարներին ու գործունեությանը չէին անդրադառնում: Դա մնում է լիովին չուսումնասիրված թեմա նաև մեր օրերում:

Հայ պատմագրությունում Միրզա Մալքոմ խանի վերաբերյալ ցայսօր որևէ պատմական ուսումնասիրություն չի կատարվել: Մալքոմ խանին իր ընտանեկան հուշերում ներկայացնում է նրա զարմուհի Աննա Նակիպ Պուրրոս Ղալին [9]: Նրան թռուցիկ անդրադառնում է Ա. Ալպոյաճյանը [10], իսկ Վ. Զարդարյանը Մալքոմ խանի կենսագրությունը ներկայացնում է ընդամենը երկուսուկես էջում[11]: Խորհրդային տարիներին լույս տեսած Հ. Մ. Եգանյանի գրքում ոչ ճիշտ հարցադրումներ և եզրահանգումներ են արվել Մալքոմ խանի մասոնական հայացքների և գործունեության վերաբերյալ: Այս կցկտուր տեղեկությունները լիարժեք չեն ներկայացնում հայազգի նշանավոր լուսավորչին, տեսաբանին, պետական գործչին ու մասոնին: Մինչդեռ նա ոչ միայն 19-րդ դարի Իրանի, այլև համաշխարհային պատմության երևելի դեմքերից է: Նա գործունեությունն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես բուրժուական ազգայնականության և Իրանում առաջին մասոնական օթյակի հիմնադրման ուսումնասիրության տեսանկյունից, որի լավագույն ներկայացուցիչն էր Իրանում և նրա սահմաններից դուրս: Բազմաթիվ ուումնասիրողներ Մալքոմ խանին դեռ կենդանության օրոք համեմատում էին ֆրանսիական լուսավորիչների հետ, համարում էին Իրանի «ամենակրթված մարդկանցից մեկը, եթե ոչ ամենակրթվածը»[12], «մեծ բարեգործ», «Իրանը լուսավորող և ազատության շարժման առաջնորդ»[13], «սահմանադրական շարժման նախակարապետ» [14]:

Միրզա Մալքոմ խանը (Հովսեփ Հակոբի Մելքումյան) ծնվել է 1833թ. Պարսկաստանի Նոր Ջուղա հայկական գաղթավայրում, հայազգի Միրզա Յակուբ խանի ընտանիքում[15]: 1843թ. Մալքոմ խանը մեկնել է Փարիզ, սովորել Վենետիկի Մխիթարաննե-

---

* Հոդվածն ընդունվել է 12.02.2019:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

որի հիմնադրած Սամուել Մորատի քոլեջում (Մուրադյան վարժարան), որտեղ դասավանդումը կատարվում էր ֆրանսերեն[16]: 1846թ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ֆրանսուա Գիզոն (1787-1874) Փարիզում պաշտոնական այցով գտնվող Մահմուդ Ալի-խան Շիրազին տպավորություններ է հայտնել նրա ուսումնառության մասին[17]: Ուսման տարիներին նա ակտիվ ընթերցում է ֆրանսիական լուսավորիչների և եվրոպական գրողների ստեղծագործությունները, հրապուրվում գրականությամբ և փիլիսոփայությամբ: Նա առանձնակի հետաքրքրություն է դրսևորում հատկապես 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխական գործիչներից կոմս Միրաբոյի (1749-1791) ստեղծագործությունների նկատմամբ, որի անկախության մասին կոչը նույնիսկ ցանկանում էր թարգմանել պարսկերեն[18]: 1850թ. Մալքոմ խանը ընդունվել է Փարիզի նշանավոր պոլիտեխնիկական բարձրագույն քոլեջը՝ ստանալով կապի և հեռագրատան ճարտարագետի դիպլոմ: 1855թ. վերջին նա վերադարձել է Իրան, ընդունել մահմեդականություն[19] և նշանակվել պետական թարգմանիչ՝ հաշվի առնելով լեզուների փայլուն իմացությունը: Սկսած 1856թ. դասավանդել է Դար օլ Ֆոնունի (Գիտության տուն) նորաբաց եվրոպական տիպի աշխարհիկ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունում: Դասավանդմանը զուգահեռ՝ Մալքոմ խանը նշանակվել է Նասեր էդ-Դին շահի (1831-1896) անձնական թարգմանիչը և պաշտոնավարելու ընթացքում սերտ կապեր հաստատել առաջին նախարար Զաֆար խան Մոշիր օդ-Դոուլեի հետ: 1856թ. մայիսին Մալքոմ խանը նշանակվել է Կ. Պոլսի և Փարիզի բանակցություններում Իրանի պատվիրակության ղեկավար, ռազմական նախարար Ֆարրուխ-խան Ամին օդ-Դոուլեի օգնականը [20]: Փարիզում երիտասարդ Մալքոմ խանն իրեն դրսևորել է ոչ միայն որպես փայլուն թարգմանիչ և միջազգային հարաբերությունների լավագույն գիտակ, այլև հմուտ օգնական: Նա հաջողությամբ կատարում է Ֆարրուխ խանի քաղաքական բարդ հանձնարարությունները՝ Իրանի և Մեծ Բրիտանիայի միջև հաշտություն կնքելու գործում, որը տեղի ունեցավ 1857 թ. մարտի 4-ին[21]: Ֆրանսիայում անցկացրած տարիները խոր հետք թողեցին երիտասարդ Մալքոմ խանի աշխարհայացքի ձևավորման վրա, որի հիմքում ընկան լուսավորության, հասարակական առաջընթացի գաղափարներն ու արևմտաեվրոպական մշակութային արժեքները [22]: Ելնելով այս մտայնությունից՝ որոշ ուսումնասիրողներ Մալքոմ խանին համարել են Իրանի առաջին լուսավորիչ և «մշակութային-լուսավորչական շարժման առավել արմատական թևի ներկայացուցիչ»[23]:

Հասարակական, քաղաքական գործունեության առաջին փուլում Մալքոմ խանը հանդես է գալիս որպես եվրոպական քաղաքականության ջատագով և լուսավորության լիբերալ թևի ներկայացուցիչ[24]: Սկզբնական շրջանում Մալքոմ խանի քաղաքական հայացքները չափավոր էին: Նա Իրանի պետական համակարգում արմատական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն չէր տեսնում՝ գտնելով, որ երկրում ստեղծված վիճակը կարելի է փոխել լուսավորության ճանապարհով: Նա տեսնում էր, որ մտավորականության և ազատամիտ տրամադրություններ ունեցող որոշ պետական պաշտոնյաների շրջանում հասունանում է երկրում բարեփոխումներ իրականացնելու պահանջը: Այդ տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան Մալքոմ խանի «Քեթաբչեյե դալաբի» («Գաղտնիության գիրք») աշխատությունում: Նրանում Օսմանյան կայսրության «Թանզիմաթի» սկզբունքով Մալքոմ խանը առաջ է քաշում բարեփոխություններ իրականացնելու անհրաժեշտության գաղափարը: Նա գրում է, որ իրանական միապետությունը պետք է ամրապնդել՝ «արդիականացնելու» և «եվրոպականացնելու» ճանապարհով, «վերևից» բարեփոխումներ իրականացնելու միջոցով [25]: Նա գիտակցում էր, որ դա բավական երկարատև գործընթաց է և պահանջում է շատ ժամանակ, քանի դեռ իրանցի «հայրենասերները» եվրոպական քաղաքակրթության հետ հաղորդակցվելը և արժեքները գնահատելը համարում են ազգային շահերի դավաճանություն: Մալքոմ խանի համոզմամբ՝ եվրոպացիներից պետք է ընդօրինակել ոչ միայն նրանց տեխնիկական նվաճումները, այլև պետական քաղաքական կարգը, կառավար-

ման համակարգը, կրթությունը, գիտությունն ու մշակույթը: Այնպես որ, եզրակացնում է նա, եթե Իրանը ցանկանում է ընթանալ առաջադիմության և զարգացման ճանապարհով, ապա պետք է հետևի Եվրոպայի օրինակին [26]: Մալքոմ խանն աներեւելի էր համարում, որ 19-րդ դարում, երբ աշխարհը պայծառ է լուսավորության բարերար ճառագայթներով , Իրանում բացակայում է առաջընթացը, մտքի և խոսքի ազատությունը: Նրա կարծիքով՝ իրանցիները նույնքան ընդունակ և աշխատասեր են, որքան եվրոպացիները, ունեն հին մշակույթ ու քաղաքակրթություն: Արևելքում գոյություն չունի այնպիսի ժողովուրդ, որն ընդունակ չլինի առաջընթացի: Հետաբար, եզրակացնում է նա, իրանցիները մյուս ժողովուրդների նման նույնպես «ընդունակ են առաջընթացի» [27]:

Եվրոպական լուսավորության և առաջընթացի գաղափարակիր Մալքոմ խանը, «որպես ազատ մտածող մարդ»[28], 1850-ական թվականներին հավատում էր, որ Իրանի բացարձակապետության պայմաններում լուսավորյալ միապետը «իմաստուն քայլերի» շնորհիվ կարող է լուսավորել ժողովրդական լայն զանգվածներին: Այս կապակցությամբ նա գրում է. «Ես կապացուցեմ աշխարհին, որ ինչ մեծ գործեր կարող է անել արդարամիտ շահը, եթե նա նպատակ է հետապնդում ժողովրդի վերածնունդը»[29]: Հավատալով Նասեր էդ-Դին շահի պետական իմաստնությանը և բարեփոխումների ցանկությունը՝ Մալքոմ խանը մշակեց սոցիալական, տնտեսական, քաղաքական և վարչական լայն բարեփոխումներ իրականացնելու ծրագիր, որը Իրանը պիտի տաներ «եվրոպականացման» ճանապարհով: Բարեփոխումների իր ծրագիրը նա շարադրեց 1858թ. «Դավթար -ե թանզիմաթ» («Բարեփոխումների գիրք») և «Դավթար -ե կանուն» («Օրենքների գիրք») աշխատություններում: Դրանցում նա կարևորում է պետական կառավարման երկու ձև՝ միապետություն և հանրապետություն: Որպես «սահմանափակ միապետության» ցանկալի օրինակ՝ նա վկայակոչում է Անգլիան և Ֆրանսիան, բայց միաժամանակ նշում, որ այդ կարգը Իրանի համար ընդունելի չէ: Նա գտնում էր, որ Իրանի համար ընդունելի է ռուսական կամ ավստրիական բացարձակ միապետությունը[30], իսկ իդեալական կլինի սահմանադրական միապետական կարգը: Դրան հասնելու համար նա առաջարկում է սահմանադրության ընդունման ճանապարհով Իրանում օրենսդիր իշխանությանն առանձնահատուկ տեղ տալ և այն անջատել գործադիր իշխանությունից: Ընդսմին, նրա համոզմամբ, շահի իշխանությունը ոչնչով չպետք է սահմանափակվի:

Պետական կառավարման համակարգը կատարելագործելու նպատակով Մալքոմ խանն առաջարկում է ստեղծել մի քանի կառավարական ասամբլեաներ՝ վարչական, խորհրդակցական, ազգային, օրենսդրական և պետական խորհուրդ: Նրա կարծիքով դա անհրաժեշտ է ոչ թե միապետի, այլ պետական ապարատի պատասխանատվությունը բարձրացնելու համար: Սակայն ի՞նչ ճանապարհով և ինչպե՞ս պետք է ձևավորվեին այդ ասամբլեաները, Մալքոմ խանը չէր պարզաբանում:

«Բարեփոխումների գրքում» Մալքոմ խանը ներկայացնում է 23 օրենք, որոնք ներկայացնում էին գործադիր և օրենսդիր իշխանությունների բոլորովին նոր կառուցվածք: Դրանք հռչակում էին բոլոր մարդկանց իրավահավասարությունը օրենքի առաջ, խղճի ազատություն, կանոնակարգում էին գործող և իր առաջարկած օրենսդրականությունները, համաձայն որի՝ օրենսդիր խորհուրդը պետք է ձևավորվեր յուրաքանչյուր տարի, իսկ կրոնական, պետական և աշխարհիկ դատարանները ենթարկվելու էին միասնական պետական օրենքին: Մալքոմ խանն առաջարկում է ստեղծել երկու ինքնուրույն նոր մարմին՝ հարկերի չափ սահմանելու և դրանք հավաքելու նպատակով, սահմանել եռաստիճան եվրոպական կրթական համակարգ, հիմնել ազգային բանկ, ֆրանսիական մասնագետների օգնությամբ կառուցել ճանապարհներ, երկաթուղիներ, նպաստել առևտրի զարգացմանը[31]:

Մալքոմ խանն այս առաջարկությունները Մոշիր օդ-Դուլեի աջակցությամբ ուղարկեց շահին: Նա փորձում է համոզել Նասեր էդ-Դինին, որ սահմանադրություն հռչակելով և բուրժուական զարգացման ճանապարհ ընտրելով՝ նա շատ ավելի լուրջ հաջո-

ղություններ կունենա: Շահը, ծանոթանալով նախագծի հետ, այն վավերացրեց իր կնիքով, բայց քննարկումը հետաձգեց մինչև ավելի բարենպաստ ժամանակներ: Նա Մալքոմ խանին այդ կապակցությամբ գրում է. «Մեզ առաջարկվում է կուրորեն դուրս գալ դեպի առաջընթացի ճանապարհը: Մենք չգիտենք, թե ուր պիտի գնանք: Առաջ քայլելու մեր փորձը կարող է հանգեցնել անկման, որից հետո մենք ոտքի չենք կանգնի: Թող այսօրվա աշխարհի ուրիշ պետություններն ու քաղաքագետները մեզ ցույց տան որևէ լուսավոր, մաքուր և ճշմարիտ ճանապարհ»[32]:

Շահը խոստացավ Մալքոմ խանին աջակցել նրան «այդ մեծ առաքելության» իրականացման գործում և ձևավորեց 6 նախարարներից բաղկացած խորհուրդ: Մալքոմ խանն առաջին նախարարին ներկայացրեց Իրանում սահմանադրական միապետություն հաստատելու նախագիծ՝ հույս ունենալով նրա օգնությամբ համոզել շահին գնալ այդ քայլին: Նասեր էդ-Դինը գործնականում ոչինչ չարեց նրա նախագիծը ամբողջությամբ կյանքի կոչելու ուղղությամբ, թեպետ այն նախատեսում էր սահմանափակել առաջին նախարարի լիազորությունները և ոչ թե շահի:

Բարեփոխումների իր ծրագիրը տարածելու և այն հասարակության տարբեր խավերին, հատկապես՝ մտավորականությանն ու ազնվականությանը, ծանոթացնելու նպատակով Մալքոմ խանը Թեհրանում հիմնեց «Ֆարամուշ խանե» («Մոռացության տուն») անվանումով գաղտնի կազմակերպություն: «Ֆարամուշ խանեն» Իրանում հիմնված առաջին մասոնական օթյակն է: Այն կոչվեց «Մոռացության տուն», որովհետև նրա անդամները, հավատարիմ մնալով մասոնական գաղտնագործունեությանը, իրենց «տունը» ՝ասել է թե՝ օթյակը, լքելուց հետո, օթյակի կանոնադրության համաձայն, մահվան սպառնալիքի տակ պետք է մոռանային այնտեղ տեսածն ու լսածը[33]:

Պատմագրության մեջ «Ֆարամուշ խանեի» բնույթն ու գործունեությունը լայն քննարկման առարկա է դարձել, որի վերաբերյալ խորհրդային և իրանական ուսումնասիրողների արտահայտված կարծիքները և գնահատականները միանշանակ չեն ու տարաբնույթ են: Խորհրդային պատմաբանները մեծ մասամբ «Ֆարամուշ խանեն» ներկայացնում են որպես «քաղաքական ակումբ»,[34] «Ֆրանկմասոնական կազմակերպության արևելյան բաժնի հետ կապված մի միություն»[35], «Ֆրանկմասոնական կուսակցություն»,[36] «եվրոպական տիպի գաղտնի քաղաքական կազմակերպություն»[37], «կիսալեգալ մասոնական ընկերություն» [38], «կիսալեգալ ընկերություն»[39], իսկ ոմանք՝ «մասոնական ընկերություն» և «մասոնական օթյակ» [40]:

Իրանական պատմագրությունում «Ֆարամուշ խանեն» Մոդիր Հալաջը, Իսմայիլ Ռայինը անվանում են մասոնական կազմակերպություն[41], Մալեքզադեն՝ մասոնական կուսակցություն[42], իսկ Նազեմ օլ-Էսլամ Քերմանին՝ մասոնական միություն[43]: Մալքոմ խանի կենսագիրներից Մոհամմադ Թաբաթաբային էլ գրում է, որ նա ֆրանսական մասոնների օրինակով մի «Ֆարամուշ խանե» հիմնեց[44]: «Ֆարամուշ խանեի» ստեղծման վերաբերյալ փաստաթղթերի բացակայության պատճառով պատմագրությունում միասնական կարծիք չկա օթյակի հիմնադրման տարեթվի վերաբերյալ: Իրանական հայտնի պատմաբան Խան–Մալեկ Սասանին, Մալքոմ խանի մտերիմ Միրզա Ֆաթալի Ախունդովը գտնում են, որ «Ֆարամուշ խանեն» ստեղծվել է 1857-1858թթ., երբ Մալքոմ խանը Ֆրանսիայում դիվանագիտական առաքելությունից հետո վերադարձել է Թեհրան[45]: Իրանական պատմաբան Իբրահիմ Հակիմ օլ-Մոլկի կարծիքով Մալքոմ խանը 1857-1858թթ. ֆրանսիական «Օքուս» օթյակի մասնաճյուղ է ստեղծել Իրանում, իսկ չորս տարի անց Նասեր էդ - Դին շահի թույլտվությամբ հիմնել է իրանական օթյակ: Ըստ Ֆերիդուն Ադամյաթի՝ «Ֆարամուշ խանեն» ստեղծվել է 1858 թվականին[46]: Մոհամմադ Թաբաթաբային «Ֆարամուշ խանեի» ստեղծման տարեթիվն առհասարակ չի ճշտում: Նա կարծիք է հայտնում, որ օթյակը ստեղծվել է այն բանից հետո, երբ Մալքոմ խանը, հանգամանորեն ծանոթանալով ֆրանսիական օթյակների հետ, նրանց նմանությամբ կազմել է օթյակի կանոնադրություն: Խան-Մալեկ Սասանիի կարծիքով՝ Մալքոմ խանի ծանոթությունը մասոնության հետ տեղի է ունեցել 1857թ. դեկտեմբերին, երբ

նա Փարիզում այցելել է Ֆրանսիական «Grant Orient» («Մեծ Արևելք») օթյակը: Նրա հետ եղել են նաև Միրզա Ֆարրուխ խանը, Նարիման խանը, ինչպես նաև շահի ապագա թիկնապահներ Մոհամեդ Ալի աղան և Միրզա Ռեզա խանը: Փարիզից վերադառնալուն պես Մալքոմ խանը ձեռնամուխ է եղել «Ֆարամուշ խանե» մասոնական օթյակի հիմնադրմանը [47]:

Խորհրդային պատմաբաններից Շ. Մ. Բադին, առանց անհրաժեշտ փաստաթղթային հիմնավորման, «Ֆարամուշ խանեի» հիմնադրումը համարում է 1857-1858թթ. [48], Ռ. Ա. Սեիդովը՝ 1858թ., [49] Ն. Ա. Թալիպովը և Դ. Մ. Անարկուլովան՝ 1859 թվականը [50], իսկ Զ. Ա. Արաբաջյանը՝ 1860 թվականը[51]: Իբրահիմ Թեյմարին գրում է, որ «Ֆարամուշ խանեն» փակվել է իր գոյության չորրորդ տարում[52]: Եթե դա ճշմարիտ է, ապա ստացվում է, որ օթյակը ստեղծվել է 1857թ., քանզի Նասեր էդ-Դինի կարգադրությամբ այն ցրվեց 1861 թվականին: Անկախ այն բանից, երբ է հիմնադրվել «Ֆարամուշ խանեն», անառարկելի է, որ դա տեղի է ունեցել Մալքոմ խանի՝ Ֆրանսիայից վերադառնալուց հետո: Նրա կենսագիրների կարծիքով ծանոթությունը մասոնության հետ տեղի է ունեցել Փարիզում ինչպես ուսումնառության, այնպես էլ Ֆարրուխ խանի դիվանագիտական առաքելության ժամանակ: Դա հաստատում է նաև Մալքոմ խանը, ով հետագայում գրում էր, որ Ֆրանսիայում գտնված ժամանակ «սկսել է ուսումնասիրել Եվրոպայի կրոնական, սոցիալական և քաղաքական համակարգը: Ես ուսումնասիրում էի կրոնական գաղտնի ընկերությունների կարգերը, ոգին ու տրամադրությունները, ինչպես նաև այդ ընկերությունների և ֆրանկմասոնական օթյակների ձևավորման համակարգը»[53]:

Հիմնելով Իրանի պատմության մեջ առաջին մասոնական օթյակը՝ Մալքոմ խանը չդարձավ դրա ղեկավարը, թեպետ անձամբ կազմեց օթյակի ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը: Հավանաբար Նասեր էդ-Դինը օթյակի ղեկավարությունը չէր վստահում երիտասարդ Մալքոմ խանին: Շահի իմացությամբ օթյակի ղեկավարներ ընտրվեցին Ֆաթ Ալի շահի (1797-1834) որդիներից Զելալ էդ-Դին Միրզան, ում տանը տեղի էին ունենում օթյակի հավաքույթները և Մալքոմ խանի հայրը՝ Յաղուբ խանը[54]: Նրանք հանդիսացել են «Ֆարամուշ խանեի» լեգալ ղեկավարները, չնայած եվրոպական մասոնները նրանց ընդհանրապես չեն ճանաչել: Օթյակի փաստացի, բայց անլեգալ ղեկավարը, խորհրդային և իրանական պատմաբանների գրեթե միահամուռ կարծիքով, Մալքոմ խանն էր[55]:

Օթյակի ստեղծման անհրաժեշտությունը Մալքոմ խանը հիմնավորում էր նրանով, որ ինքը «տեսել է կառավարության չարաշահումները, երկրի նյութական հարստության անկումը և միտք հղացել բարեփոխումներ իրականացնել»[56]: Այդ նպատակով նա «Ֆարամուշ խանեում» ընդգրկել է պետական աստիճանավորների, ազնվականների, զինվորականների և Դար օլ-Ֆոնունի ուսանողների ու շրջանավարտների: «Ֆարամուշ խանեն» ստեղծելիս Մալքոմ խանը ցանկանում էր ստանալ Նասեր էդ-Դինի բարեհաճ վերաբերմունքը և վստահությունը, ուստի նրան առաջարկեց օթյակում ընդգրկել Իրանի առավել ազդեցիկ մարդկանց: Շահը չխանգարեց օթյակի ստեղծմանը, բայց նրանում տեղի ունեցող քննարկումներին տեղեկացված լինելու նպատակով իր հավատարիմ մարդկանց ուղարկեց օթյակ [57]:

«Եվրոպայի ազատ որդի»[58] Մալքոմ խանը իր հիմնադրած օթյակում տարածում էր ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Օգյուստ Կոնտի (1798-1857) սոցիալական զարգացման տեսությունը[59] և անգլիական փիլիսոփա, մասոն Ջոն Սթյուարտ Միլլի (1806-1873) ազատախոհության ու մարդու անձնական ազատության անհրաժեշտության գաղափարը[60]: Նրա «Ազատության մասին» աշխատանքի մի մասը Մալքոմ խանը հետագայում թարգմանեց պարսկերեն[61]: Նրանց գաղափարների ազդեցության տակ Մալքոմ խանի կազմած «Ֆարամուշ խանեի» կանոնադրության համաձայն օթյակի անդամներն ունեին կյանքի և գույքի երաշխիքներ, իրավունքների հավասարություն, ինչպես նաև գաղափարների, խոսքի, գրչի, անձի, մասնագիտության, հավաքների ա-

զատություն[62]: Օթյակի նիստերում քննարկվում էին անհատի ինքնակատարելագործման հարցեր և ընդգծվում էր, որ մարդը հասնի կատարելության, պետք է իրականացնի մի շարք պարտավորություններ. խրախուսի բարի գործերը, հեռու մնա չարից, դիմադրի բռնապետությանը, գիտելիքներ տարածի, ապրի իր նման մարդկանց հետ ներդաշնակության մեջ, համախմբի իր հայրենակիցներին[63]:

«Ֆարամուշ խանեի» հիմնադիր Մալքոմ խանը Փարիզում ուսանելու տարիներին դաստիարակվել էր ոչ միայն ֆրանսիական լուսավորիչների գաղափարներով, այլև որպես մասոն ազատ որմնադիրների գաղափարների կրողը, ջատագովն ու դրանց առաջին տարածողն էր Իրանում: Նա արևմտյան լուսավորիչների ու մասոնների նման ելնում էր այն մտայնությունից, որ «աշխարհը կառավարում են գաղափարները», իսկ հասարակական առաջընթացը պայմանավորված է գլխավորապես մարդկային բանականության հաջողություններից: «Ֆարամուշ խանեի» անդամները ղեկավարվում էին պարսիկ ժողովրդին, նրա շահերին ու մարդասիրությանը ծառայելու գաղափարով: Նրանց համար առաջնայինը «ամենից առաջ մարդկության բարեկեցությանն՝ ընդհանրապես և պարսիկ ժողովրդի բարեկեցությանը՝ մասնավորապես» ծառայելն էր [64]:

Մալքոմ խանը գրում է, որ ճշմարտությունը մեկն է՝ անկախ այն բանից, թե որտեղից է գալիս: Եթե մասոնությունը գալիս է Եվրոպայից, ապա դրանում արևէ վատ բան չկա: Նրա կարծիքով՝ մասոնական օթյակում միավորված «արժանապատիվ մարդկանց միությունն ավելի կարևոր է, քան տարբեր կրոնների միությունը» [65]: Հետևաբար մասոնական «եղբայրությունը» պետք է հավասարապես վերաբերվի թե՛ հարուստին և թե՛ աղքատին: Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ Մալքոմ խանը մարդկանց գործունեության, նպատակների և վարքագծի մասին դատողություններ էր անում ոչ թե որպես լուսավորության ջահակիր, այլ մասոնական գաղափարախոսության կրող: Նա գրում է. «Որպեսզի մարդը կատարյալ լինի, պարտավոր է՝ հեռու մնալ հիմար արարքներից, բարի գործեր կատարել ջանքեր գործադրել ճնշումը վերացնելու համար, խաղաղ ապրել ուրիշների հետ, ձգտել ուսման, տարածել գիտելիքներ, իր ուժերի հնարավորին չափ աջակցել պետությանը կարգ ու կանոն հաստատելու գործում»[66]: Մալքոմ խանի այս դատողությունները բխում են մասոնության «Աստվածաշունչ» համարվող Ջեյմս Անդերսոնի՝ «Ազատ որմնադիրների սահմանադրության» դրույթներից:

Բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության գաղափարը Մալքոմ խանը ջանում էր հասանելի ու ընկալելի դարձնել ոչ միայն «Ֆարամուշ խանեի» անդամներին, այլև մայրաքաղաքի աշխարհիկ բարձր խավին: Սակայն նրա լուսավորյալ գաղափարները ճիշտ չընկալվեցին շահի շրջապատում: Մալքոմ խանի առաջ քաշած «իդեալական իշխանության» գաղափարը շահին մոտ կանգնած պետական այրերը ներկայացրին որպես մասոնական օթյակի «հանրապետական» դավադրություն, որը պիտի տապալեր իր իշխանությունը: Նրանք շահին համոզում էին, որ Մալքոմ խանի օթյակում տիրող «ազատախոհության հայացքները» կարող են լուրջ վտանգ սպառնալ պետությանը: Նասեր էդ-Դին շահի կասկածները խորացան հատկապես այն բանից հետո, երբ Մալքոմ խանը սկսեց պնդել բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Շահը «Ֆարամուշ խանե» օթյակ ուղարկեց իր մերձավոր հոգևորականներից Թեհրանի իմամ Ջումա Միրզա Ջեյն օլ-Աբեդիին, ով քաղաքականության նկատմամբ հետաքրքրություն էր դրսևորում[67]: Նա մասնակցեց մի քանի նիստերի և շահին հայտնեց, որ օթյակի գործունեությունը պետության «կործանման նախերգանքն է» [68]: Այն անհավատների օջախ է, որի գործունեությունը հակակրոնական է և հակասում է մահմեդականության ոգուն[69]: Հոգևորականությունը «Ֆարամուշ խանեն» ներկայացնում էր որպես անգլիական հետախուզության գործակալություն[70]: Մալքոմ խանը շատ ջանքեր թափեց համոզելու շահին, որ «Ֆարամուշ խանեի» «եվրոպական ոգին» չի հակասում մահմեդականությանը և «հակակրոնական խռովարարություն չէ»: Նա «Մասոնական օթյակ» բրոշյուրում ցույց էր տալիս, որ իր օթյակը չի հակասում մահմեդականությանը, սակայն նրա փաստարկները չհամոզեցին Նասեր էդ- Դինին: Շահը հավա-

տաց ոչ թե Մալքոմ խանին, այլ Թեհրանի իմամին և 1861թ. հոկտեմբերին հրամայեց փակել «Ֆարամուշ խանե» օթյակը [71]: Նասեր էդ-Դինի հրովարտակը տպագրած Թեհրանի թերթերից մեկը հոկտեմբերի 18-ին գրում էր, որ շահի հրամանով այսուհետև արգելվում է անգամ արտաբերել «Ֆարամուշ խանե» անվանումը, որը պետք է մեկընդմիշտ մոռացվի: Նրանք, ովքեր հետաքրքրություն կդրսևորեն այդ օթյակի նկատմամբ, կամ կփորձեն նման միություն ստեղծել խստորեն կպատժվեն [72]: Շահի հրովարտակից ոգևորված հոգևորականությունը «Ֆարամուշ խանե» օթյակը ջախջախեց և այրեց Ջելալ էդ-Դին Միրզայի տունը, որտեղ տեղի էին ունենում օթյակի հավաքույթները[73]:

Շահի հրամանով «Ֆարամուշ խանեի» ղեկավարներից արքայազն Ջելալ էդ-Դին Միրզան տնային բանտարկության ենթարկվեց, իսկ Յաղուբ խանը արտաքսվեց Իրանից[74]: Շուտով ձերբակալվեց և Իրաքի հետ սահմանային Խանակին բնակավայր աքսորվեց Մալքոմ խանը: 1863 թ. շահը Թուրքիայում Իրանի դիվանագիտական ներկայացուցիչ Միրզա Հուսեյն խան Սեփեհսալարի երաշխավորությամբ նրան ուղարկեց Բաղդադ: Դրանով Մալքոմ խանի հիմնադրած մասոնական օթյակը դադարեց գործելուց: Իրանական պատմագրությունում փաստագրական հարուստ տվյալներ չկան «Ֆարամուշ խանեի» գործունեության, օթյակի անդամների և նրանց համախոհների թվաքանակի վերաբերյալ [75]: Օթյակի փաստաթղթերը, նիստերի արձանագրությունները մեզ չեն հասել: Բացառված չէ, որ դրանք նույնիսկ չեն կազմվել գաղտնի գործելու պատճառով: Դա հնարավորություն չի տալիս հիմնովին պարզելու, թե իրականում ինչո՞վ է զբաղվել օթյակը և ի՞նչ գործունեություն է ծավալել:

Մալքոմ խանը հետագայում ասում էր, որ օթյակն ունեցել է 30 հազար կողմնակից, բայց անդամների թիվը չէր հայտնում [76]: Իրանցի պատմաբան Իսմայիլ Ռայինի կարծիքով օթյակի անդամների թիվը եղել է 38, այլ հեղինակների տվյալներով՝ ավելի քան 60 մարդ[77]: Օթյակի անդամների մեծամասնությունը կազմել են Դար օլ-Ֆոնունի ուսանողներն ու շրջանավարտները, ովքեր գնացել են իրենց ուսուցիչ Մալքոմ խանի հետևից: «Ֆարամուշ խանեում» եղել են նաև մարդիկ, ովքեր կիսել են Մալքոմ խանի հայացքները և աջակցել նրա գաղափարներին: Նրանցից հայտնի հրապարակախոս Մաջիդ օլ-Մուլկը Մելում խանին նվիրված Ալի խան Ամին օդ-Դոուլեի հայրն էր, ով Նասեր էդ-Դին շահի օրոք նախարարական տարբեր պաշտոններ էր զբաղեցնում: Օթյակի երևելի անդամներից էին հայտնի գրականագետ, Դար օլ-Ֆոնունի առաջին տնօրեն Ռեզա Կուլի խան Հեդայատը, տարեգիրներ Միրզա Մոհամմեդ Տագի-Լիսան օլ-Մուլս Սիփեհրը և Միրզա Ջաֆար Հակասկենեգարը, ճանաչված գրող Միրզա Մոհամմեդ խան Սաբան: Մալքոմ խանի հորդորով «Ֆարամուշ խանեի» անդամ էին դարձել «Խեկմատ» ընկերության երևելի դեմքեր, «գաղտնախորհուրդ գիտությունների» քարոզիչներ Միրզա Ջաֆար Հակիմ էլահին և Միրզա Հասան Ջուլֆան[78]: «Ֆարամուշ խանեն» ամբողջովին չդադարեցրեց իր գործունեությունը և շարունակեց անլեգալ պայմաններում աշխատել: Հետագայում հիմնվեցին երկու նոր ընկերություններ՝ «Մասոնների գաղտնի միություն» և «Մարդասերների ընկերություն»:

«Ֆարամուշ խանեի» փակումը լրջորեն խաթարեց Մալքոմ խանի հեղինակությունը Իրանի կառավարող շրջաններում որպես պետական և քաղաքական գործիչ: Բաղդադի կառավարիչը նրան ընդունելության չարժանացրեց, ուստի Մալքոմ խանը հարկադրված մեկնեց Կ.Պոլիս, որտեղ Հուսեյն խան Սեփեհսալարի օգնությամբ դարձավ իրանական դեսպանատան ներկայացուցչի խորհրդական: Կ.Պոլսում նա քրիստոնեություն ընդունեց [79] և հայկական եկեղեցում ամուսնացավ պոլսահայ նշանավոր Տատյան գերդաստանի[80] երևելի դեմքերից Առաքել բեյի աղջկա՝ Հերիքայի հետ [81]: Տատյանները ոչ միայն Օսմանյան կայսրությունում արքունի վառոդապետներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ և դիվանագետներ էին, այլև Մալքոմ խանի նման երևելի մասոններ: Նրանցից դիվանագետ Հարություն փաշա Տատյանը (1830-1901), նրա ավագ եղբայր տաղանդավոր ճարտարագետ Ներսես Խոսրով բեյ Տատյանը (1825-1872) Կ.Պոլսի «Union d orient» («Արևելքի միություն») ֆրանսիական օթյակի անդամ էին [82]:

Կ.Պոլսում Մալքոմ խանը սկսած, 1863թ-ից, ակտիվորեն աշխատում էր պարսկա-արաբական մատենագրության բարեփոխման նախագծի վրա: Նա գտնում էր, որ արաբական այբուբենի հնչունային համակարգը չի համապատասխանում իրանական լեզուներին, այդ թվում՝ պարսկերենին, ինչպես նաև իր մայրենի հայերենին: Ուստի առաջարկում էր հատուկ տառեր մտցնել պարսկերենի բոլոր բաղաձայնների համար և առանձին գծագրել յուրաքանչյուր տառը: Մալքոմ խանը համոզված էր, որ մահմեդական ժողովուրդները կարող են առաջընթաց ունենալ միայն այն բանից հետո, երբ իրենց այբուբենը հարմարեցնեն եվրոպական տեխնիկային: Հոգևորականությանն ընդդիմանալու պատճառով Մալքոմ խանի նախագիծը կյանքի չկոչվեց: Չնայած դրան նա չընկճվեց և իր առաջարկած տարբերակով իրանցիների համար մի քանի գիրք հրատարակեց:

Կ.Պոլսում Մալքոմ խանը մնաց 1863-1871թթ., որը համընկավ Թուրքիայում սահմանադրական շարժման տարիների հետ: Թուրքիայում ծավալված իրադարձությունները համահունչ էին նրա քաղաքական հայացքներին: Այդ տարիներին նա գրեց «Առաջընթացքի սկզբունքները» և «Պետության կազմավորումը», «Շահը և նախարարը» աշխատությունները, որտեղ մասոնական գաղափարախոսությամբ կրկին առաջ է քաշում հասարակական առաջընթացի, բարեփոխումներ իրականացնելու և Իրանում սահմանադրական միապետություն հաստատելու անհրաժեշտությունը: Իրանցի պատմաբան Հասան Քաշմադն ընդգծում է, որ սահմանադրական շարժման ընթացքում Մալքոմ խանի աշխատությունները հսկայական ազդեցություն թողեցին երիտասարդ սերնդի վրա: Նրանցից «երիտասարդ առաջադեմ գրողները հիանում էին նրա գաղափարներով և նրա ստեղծագործությունների ոճով» [83]:

1871թ. Մալքոմ խանը, որպես Հոսեյն խան Սեփեհսալարի օգնական, ում շահը նշանակել էր առաջին նախարար, վերադարձավ Իրան: Նույն թվականին շահը նրան շնորհեց «Նեզամ օլ-Մոլկ» («Պետության հենարան») տիտղոս: Այդ տիտղոսին նա արժանացավ ոչ միայն շահին հավատարմորեն ծառայելու համար, այլև որպես պետական գործիչ, ով արտաքին քաղաքական հարցերում հմտորեն պաշտպանում էր Իրանի շահերը[84]: Ոգևորված Նասեր էդ-Դինի գնահատականից՝ Մալքոմ խանը նրան առաջարկում է վերահսկողություն սահմանել կրթության նախարարության և հոգևորականության գործունեության նկատմամբ, ստեղծել արտաքին գործերի նախարարություն, ավելացնել պետության եկամուտները, ամրապնդել բանակը, ներդնել ժամանակակից տեխնիկա: 1872թ. հոկտեմբերին Հոսեյն խանը շահին ներկայացրեց պետական կառավարման բարելավման իր ծրագիրը, որը զգալի չափով կրկնում էր Մալքոմ խանի նախագիծը: 1872թ. դեկտեմբերին շահը հավանություն տվեց Հոսեյն խանի առաջարկությանը, որը նաև Մալքոմ խանի հաջողությունն էր:

1870-ական թվականներին Անգլիայում Իրանի դեսպան Մալքոմ խանի բարենորոգչական գործունեությունն իր վրա կրում էր անգլիական ազդեցությունը: Նա առաջարկում էր Անգլիայի օրինակով Իրանում հաստատել սահմանադրական միապետություն, Անգլիայից վարկ վերցնել «Իրանի արդիականացման» համար: 1878թ. Նասեր էդ-Դին շահը մասոն Մալքոմ խանին շնորհեց «Ջանաբե Աշրաֆ», իսկ հետագայում՝ «Շահզադե Մոսլեհ» («Արքայազն բարենորոգիչ»)[85] տիտղոսը: Իրանի պատմության մեջ դա աննախադեպ բան էր, քանզի հայազգի գործիչն առաջինն արժանացավ այդ բարձր տիտղոսին՝ չլինելով արքայական տոհմի ներկայացուցիչ:

1880-ական թթ. սկզբին Մալքոմ խանի հետ կապ հաստատեցին մի խումբ իրանցի առաջադեմ գործիչներ, որոնցից Սեյիդ Ջամալ օդ – Դին Ասադաբադին Կ.Պոլսում ստեղծեց «Իթթեհադ-ե իսլամ» («Իսլամի միություն») ընկերությունը: Այս ընկերությունը օգտագործելով կրոնը, նպատակ էր հետապնդում, իրանցիներին ազատագրել նախապաշարումներից և նպատակաուղղել Իրանի գաղութացման դեմ մղվող պայքարում[86]: 1880-ական թվականներին Մալքոմ խանն իր գրական և քաղաքական բազմաթիվ հրապարակումներում փորձում է իրանցիներին հասանելի դարձնել այն միտքը, որ ազգային անկախություն, առաջընթաց կարելի է ձեռք բերել միայն այն դեպքում, երբ Իրանը կշրջվի դե-

պի արևմուտք և եվրոպացիների օրինակով կգնա գիտության և տեխնիկայի զարգացման ճանապարհով: Զուտ մասոնական դատողությամբ աշխարհաքաղաքացի Մալքոմ խանը երկիրը համարում է «համայն մարդկության ընդհանուր տունը» և բացառապես «համաշխարհային առաջընթացի» հետ կապում Իրանի զարգացումը[87]: Քաղաքակրթությունը և առաջընթացը նա համարում է «մեկ ընդհանուրի երկու կողմերը, հասարակական զարգացման մեծ, հզոր ցուցանիշը, ցանկացած ազգի և պետության կեցության և ծաղկման հիմքը»[88]: Նա գտնում էր, որ Արևելքի մահմեդական ժողովուրդները քաղաքակիրթ Եվրոպայից սովորելու շատ բան ունեն: Ելնելով այս համոզմունքից՝ նա կոչ է անում իրանցիներին սովորել, տիրապետել լատիներենին՝ այդ «հրաշագործ թալիսմանին», որը նրանց առաջ կբացի եվրոպական քաղաքակրթության, լուսավորության և առաջընթացի ճանապարհը: Իր մի շարք դրամաներում, որոնք հիմնականում քաղաքական երգիծանք են, Մալքոմ խանն անողոք քննադատում է Իրանի քաղաքական համակարգի անարդյունավետությունը[89], պետական գործիչների տգիտությունը[90], նահանգապետերի անպատկառությունն ու թալանչիությունը[91]: «Օրենքների օրագիր» աշխատությունում (1883-1884թթ.) նա առաջ քաշեց իրանական օրենսդրություն մշակելու գաղափարը, որը թեև շահը մերժեց, բայց հետագայում Իրանի առաջին Մեջլիսը օգտագործեց քրեական կոդեքսի մշակման գործում [92]:

1886թ. սեպտեմբերի վերջին Մալքոմ խանի վերադարձը Իրան նպաստեց «Ջամեյե ադամիյաթ» գաղտնի ընկերության երրորդ անգամ ակտիվացմանը, որը նրա նախաձեռնությամբ մասնաճյուղեր ստեղծեց Սպահանում, Շիրազում, Կաղզվինում և Մազենդերանում: Ընկերությունը հրատարակած թռուցիկներում հանդես էր գալիս Իրանում սահմանադրական միապետություն հաստատելու և խորհրդարան ձևավորելու օգտին, խստորեն քննադատում էր Նասեր էդ-Դին շահի և նրա կառավարության թույլ տված չարաշահումները[93]: Այս հարցում ընկերությանը միացան նույնիսկ երկու նախարար [94]:

1890-ական թթ. սկզբում Մալքոմ խանը մտերմացավ Ջեմալ էդ-Դին Ազադաբադիի (1839-1897) հետ: Նա հայտնի մասոն էր, 1878թ. Կիպրոսում մասոնական օթյակ էր գլխավորում, իսկ 1884թ. մասոն ձեռնադրվել էր նաև Փարիզում[95]: Ի տարբերություն Մալքոմ խանի՝ նա ավելի հետևողականորեն էր հանդես գալիս Իրանի շահի անսահմանափակ իշխանության դեմ, որը համարում էր երկրի զարգացման գլխավոր խոչընդոտը: Ջեմալ էդ-Դինի քաղաքական ազդեցությունն Իրանում կտրուկ աճեց, նա ձեռք բերեց մեծ թվով համախոհներ [96]:

1890թ. սկզբում Մալքոմ խանը Ջեմալ էդ-Դին Ազադաբադիի աջակցությամբ Լոնդոնում հիմնադրեց «Կանուն» («Օրենք») թերթը: Այն արմատական բնույթ ուներ և ի սկզբանե դարձավ առաջադիմականների և սահմանադրականների ձայնափողը: Մալքոմ խանը ոչ միայն թերթի հրատարակիչն էր, այլև միաժամանակ խմբագիրն ու գլխավոր հոդվածագիրը[97]: «Կանունի» առաջին համարը լույս տեսավ 1890թ. փետրվարի 21-ին՝ «Միություն, արդարություն, առաջընթաց» մասոնական կարգախոսով: Թերթը տպագրում էր ընթերցողների նամակներ և թղթակցություններ, որոնց հեղինակների անունը Մալքոմ խանը գիտակցաբար թաքցնում էր, որպեսզի Իրանում նրանք իշխանությունների կողմից չհալածվեն [98]: Նա «Կանունը» իրանական լուսավորության արմատական թևի ներկայացուցիչ Միրզա Աղա-խան Կերմանիի միջոցով գաղտնի առաքում էր Իրան և արաբական երկրներ[99] ու տարածում Նասեր էդ-Դին շահի ընդդիմադիրների շրջանում: Թերթը որևէ մեկի մոտ գտնելու դեպքում նրան բանտարկում կամ պատժում էին[100]: «Կանունի» գաղափարական ուղղության և տպագրած հոդվածների գլխավոր հեղինակը Մալքոմ խանն էր, թեպետ նա գրում էր, որ անկախ այն բանից, թե ով է թերթի նյութերի հեղինակը, իրականում այդ հեղինակի անունն է «Իրանի ժողովուրդ»[101]: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նա միայն թերթի 12-րդ համարում բացահայտեց, որ «Կանունի» հիմնադիրը հանդիսանում է «իշխան Միրզա Մալքոմ խան Նեզամ-օդ-Դոուլեն»:

1890-ական թվականներին «Կանունի» էջերում Մալքոմ խանը պարբերաբար լու-

սաբանում էր «Ադամիյաթի» խմբակների գործունեությունը[102], հետևողականորեն քննադատում էր շահի և առաջին նախարարի հակաժողովրդական քաղաքականությունը: Որպես միապետության դեմ պայքարի խաղաղ միջոց՝ Մալքոմ խանն իրանցիներին կոչ է անում հարկեր չվճարել կառավարությանը: «Պետությունը»,- գրում է նա,- որ օրենքներ չունի, իրավունք չունի հարկեր հավաքել»[103]: Ժողովրդին անհնազանդության կոչ անելով՝ Մալքոմ խանը միաժամանակ դեմ էր, որ խռովության և արյուն թափելու ճանապարհով տապալվի իր երբեմնի հովանավոր Նասեր էդ-Դինի իշխանությունը: Նա «Կանունում» գրում էր, որ պատրաստ է դադարեցնել քննադատությունը և թերթի հրատարակությունը, եթե շահը բարեփոխումներ իրականացնի ու պաշտոնանկ անի առաջին նախարարին[104]:

«Կանունի» հրատարակման երեք տարիների ընթացքում Մալքոմ խանը հանդես եկավ միայն սահմանադրական միապետություն հաստատելու պահանջով[105]: Այդ տարիներին, որպես լուսավորիչ և մասոն, նա առաջնորդվում էր «հայրենասիրություն, լուսավորություն և ժողովրդավարություն» կարգախոսով[106]: «Կանունը» Մալքոմ խանն Իրան առաքում էր իր համախոհների և «Ֆարամուշ խանեի» նախկին անդամների միջոցով, որը տարածվում էր նաև նախարարների շրջանում և անգամ շահի պալատում[107]: Սկսած 10-րդ համարից՝ «Կանունը» դարձավ Մալքոմ խանի հիմնադրած «Ադամիյաթ» («Մարդկություն») գաղտնի ընկերության պաշտոնաթերթը[108]: Նա մշակեց ընկերության կանոնադրությունը, ըստ որի՝ դրան անդամագրվողները մահվան սպառնալիքի տակ իրավունք չունեին հրապարակայնացնել ընկերության գործունեությունը: Ընկերության հիմնական կարգախոսն էր՝ «Համայն մարդկության բարօրությունն ընդհանրապես և պարսիկ ժողովրդինը՝ մասնավորապես»[109]: «Ադամիյաթ» ընկերությանն անդամագրվելը կատարվում էր «Ֆարամուշ խանե» մասոնական օթյակի նմանությամբ: Յուրաքանչյուր նոր անդամ երդում էր տալիս և ստորագրում «Մարդկայնության սկզբունքներին» հավատարիմ մնալու հռչակագրի տակ: Նրա ստորագրությունը վավերացնում էին երկու անդամ: Ընկերության նոր անդամը վճարում էր մուտքի անդամավճար և ստանում անդամատոմս՝ հետևյալ կարգախոսով՝ «Մարդկության զավակները միմյանց եղբայրներ են»[110]: Ընկերությունը գործեց 4 տարի և ուներ ավելի քան 300 անդամ: Ընկերությունը իրանցիներին կոչ էր անում ոտքի ելնել ընդդեմ բռնապետության: Այդ նպատակով գաղտնի ընկերության անդամներից յուրաքանչյուրը պետք է Իրանի քաղաքներում առնվազն 12 նոր անդամներ հավաքագրեր: Ընկերության յուրաքանչյուր նոր կառույց, անվտանգության նկատառումներից ելնելով, կարող էր ունենալ առավելագույնը 27 անդամ:

1890թ. մի խումբ ուսանողներ Թեհրանի նահանգապետի միջոցով Նասեր էդ-Դինին խնդրեցին թույլատրել ստեղծել իրենց ակումբը կամ ընկերությունը, որի կանոնադրությունը խիստ նման էր Մալքոմ խանի «Ֆարամուշ խանե» մասոնական օթյակի կանոնադրությանը: Շահն սպառնաց պատժել բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն այդպիսի ընկերություն ստեղծել[111]: 1896թ. մայիսին «Իսլամի միություն» գաղտնի ընկերության անդամ Միրզա Ռեզա Կերմանին սպանեց Նասեր էդ-Դին շահին[112]: Նոր շահ Մոզաֆֆար էդ-Դինը (1853-1907), փակեց «Ադամիյաթ» ընկերությունը, վերականգնեց Մալքոմ խանի բոլոր տիտղոսներն ու կոչումները, իսկ 1898թ. օգոստոսին նրան նշանակեց Հռոմում դեսպան[113]: Դրանից հետո նա դադարեցրեց «Կանունի» հրատարակությունը, որը տարիներ շարունակ կարևոր դեր խաղաց «իրանցիների ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում»[114]:

Մալքոմ խանը միջազգային հեղինակություն և ազդեցիկ դիրք ունեցող գործիչ էր: Այդ մասին վկայում է այն փաստը, որ սիոնիզմի գաղափարախոս, մասոն Թեոդոր Հերցլը[115] Պաղեստինում հրեական ազգային օջախ՝ էրեց Իսրայել, ստեղծելու իր ծրագրի շրջանակներում հայության դիրքորոշումը ճշտելու և աջակցություն ստանալու նպատակով 1902թ. Լոնդոնում հանդիպում ունեցավ Մալքոմ խանի հետ[116]:

1904թ. Մալքոմ խանի համախոհներից Աբբաս Կուլի խան Կազվինին Թեհրանում

«Ադամիյաթ» անունով նոր գաղտնի մասոնական ընկերություն ստեղծեց, որի գործունեությունը Մալքոմ խանը ղեկավարում էր Հռոմից: Այս ընկերության անդամներն ակտիվ մասնակցություն ունեցան 1905թ. իրանական հեղափոխությանը: 1906թ. հոկտեմբերի 7-ին բացված Իրանի առաջին Մեջլիսում ընդգրկվեցին ընկերության 15 ակտիվ անդամներ, որոնցից յոթը քաղաքական երևելի դեմքեր էին, այդ թվում՝ Մեջլիսի ապագա երկրորդ նախագահ Միրզա Մահմուդ խան Էնտեզամը[117]: Մալքոմ խանը Մեջլիսին ուղերձ հղեց, որն ընդունվեց մեծ ոգևորությամբ: Այս օթյակը գործեց մինչև 1911թվականը:

Հռոմում դեսպան աշխատած տարիներին Մալքոմ խանը գաղափարական նոր էվոլյուցիա ապրեց: Նա եկավ այն հետևության, որ քաղաքական բարեփոխումների իր ծրագիրը մեծ հաշվով Իրանին շատ բան չտվեց: Իրանի առաջընթացի լավագույն ճանապարհը մեծ բարենորոգիչը տեսնում էր օտարերկրյա պետությունների տնտեսական աջակցության մեջ: Մալքոմ խանը գնալով ավելի շատ էր համոզվում, որ ժողովուրդը պետք է լինի իր ճակատագրի տերը, իսկ պետությունը պետք է ծառայի ժողովրդի շահերին: Այս կապակցությամբ նա գրում է. «Մեր ժողովրդի փրկության սկիզբը պետք է լինի հենց ժողովրդի գործը: Յուրաքանչյուր ժողովուրդ ընդունակ է ցույց տալու իր ամբողջ ուժն ու հզորությունը միայն միավորման պայմաններում: Ժողովրդի միասնություն՝ ահա նրա գոյատևման առաջին պայմանը»[118]:

Մալքոմ խանը արժանապատվությամբ ծառայեց իր երկրին և շատ լուրջ ազդեցություն ունեցավ իրանական հասարակական, քաղաքական մտքի զարգացման և առաջընթացի գործում: Մուհամմադ Ալի շահը Մալքոմ խանին մահվանից քիչ առաջ գրած նամակում շնորհակալություն էր հայտնում «ի փառս հայրենիքի մեծագույն ծառայության և գիտելիքների համար»[119]: Կյանքի վերջին տարիներին Մալքոմ խանը բնակվում էր Փարիզում: Նրա տունը յուրատեսակ կենտրոն էր, ուր հավաքվում էին նրա գաղափարակից մասոն եղբայրները, մեծ թվով անվանի մարդիկ և, իհարկե, իր «բարեկամները՝ գրագետներ և քաղաքագետներ»[120]:

Մալքոմ խանն իր մահկանացուն կնքեց 1908թ. հայրենիքից հեռու՝ Լոզան քաղաքում, նրա մարմինն իր կտակի համաձայն հրկիզվեց[121]: Ֆ. Ադամիյաթի գնահատմամբ՝ նրա մահվանը հաջորդած հետագա 30 տարիների ընթացքում իրանցի գործիչներից ոչ մեկը քաղաքական հարցերում որևէ նոր միտք չկարողացավ արտահայտել և հարկադրված կրկնում էր Մալքոմ խանի գաղափարները[122]: Նազեմ օլ Էսլամ Քերմանիի կարծիքով՝ «Մալքոմ խանը Իրանում զբաղեցնում է նույն տեղը, ինչ Վոլտերը և Ժան Ժակ Ռուսոն Ֆրանսիայում: Իրանական ժողովուրդը հպարտանում է այդ առաջին գիտնականով ճիշտ այնպես, ինչպես ֆրանսիացիները հպարտանում են իրենց գիտնականներով: Թող հիմա հայտնվեն նրա նման հազարները, դա մեկ անգամ ևս հաստատում է, որ նա առաջինն էր, քանզի առաջընթացի համար պայքարը նա է սկսել. նրա հրաշալի գործը և անունը կապրի դարերում» [123]:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Շախտատինսկի Մ., Միրզա Մալքոմ խան, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1887, գիրք Ա, նոյեմբեր, էջ 147-151:
2. Տե՛ս Algar Hamid. Mirza Malkum Khan: A Biographical Study in Iranian Modernism. Berkeley, 1973, նույնի Religion and State in Iran, 1785-1906. Berkeley, 1969.
3. Տե՛ս Фругиян Г. Идеологическая борьба в Иране в конце XIX века. М., 1976.
4. Տե՛ս Хатеми Х. Борьба эмигрантских иранских газет против колониализма и империализма, Баку, 1964; Ибрагимов Т. А. (Шахин). Формирование политических обществ и организаций в Иране и их деятельность. Баку, 1967.
5. Տե՛ս К. Чайкин. Краткий очерк новейшей персидской литературы. М, 1923; Е. Бертельс. Очерк истории персидской литературы. М., 1928.
6. Տե՛ս Эйнгорн Я. А. Комедия Мирзы Мольком-хана “Происшествие с Ашраф ханом, губернатором Арабистана”. Ташкент, 1927.
7. Տե՛ս Комиссаров Д. С. Очерки современной персидский прозы. М., 1960; Будагян А. А. К вопросу о пьесах Мирзы Мальком хана. «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1968, թիվ 10, էջ 92-101, Дорри Дж. Персидская сатирическая проза. М. 1977.
8. Տե՛ս Анаркулова Д. М. Общественно-политическая деятельность Мальком-хана. Душанбе, 1984:
9. Աննա Նակիպ Պուրրոս Ղալի, Տատեանները. Ընտանեկան յուշեր, Գահիրէ, 1981:
10. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 5, Գահիրէ, 1961:
11. Տե՛ս Զարդարեան Վ., Յիշատակարան: Հայ երևելիների կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագրերը, գրութիւնները և այլն:(1512-1912), հ. Ա-Ե, է մաս, Կ. Պոլիս, 1910, էջ 12-116-14-118.
12. Algar Hamid. Religion and Sate in Iran 1785-1906, p. 185.
13. Տե՛ս Եգանյան Հ . Մ., Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1966, էջ 166:
14. Попов А. Л. Борьба за среднеазиатский плацдарм, “Исторические записки”, М., 1940, т. 7, с. 189.
15. Միրզա Յաղուբ խանի (Հակոբ Աբրահամի Մելքումյան) նախնիներն Արցախից էին, Շահ Աբասի 1604թ. արշավանքի ժամանակ բռնի տեղափոխվել էին Պարսկաստան: Յաղուբ խանը կրթված անձնվորություն էր, տիրապետում էր ֆրանսերենին և ռուսերենին: Նա արքայազն Զելլի Սոլտանի ֆրանսերենի ուսուցիչն էր, Թեհրանում ռուսական դեսպանատան թարգմանիչը: Տե՛ս Lloyd Ridgeon. Religion and Politics in Modern Iran, Tauris, 2005, p. 14, Аранкулова Д. С. Указ. соч., с. 52; Арабаджян З. А. Иран: власть, реформы, революция. (XIX-XX вв), Москва, 1991, с. 18.
16. Jamgocyan O. les Francs-Macons Armeniens et la Constitution de l´ Armenie ottoman Constantinople 1863. Paris, 2017, p. 35.
17. Анаркулова Д. М. Указ. соч., с. 54.
18. Там. же. с. 56.
19. Տե՛ս Janet Afary, The Iranian Constitutional Revolution, 1906-1911, New York, 1996, p. 26.
20. Տե՛ս Nikki R. Keddie. Modern Iran: Roots and Result of Revolution, New Haven, 2006, p. 431, Белова Н. К., Никитина В. Б. Иран. В сб: Зарождение идеологии национально-освободительного движения (XIX- начало XX в.), М. 1973. с. 125; Арабаджян З. А. Указ. соч., с. 18-19.
21. Տե՛ս Талипов Н. А. Общественная мысль в Иране в XIX – начале XX в., М., 1988, с. 52; Белова Н. К., Никитина В. Б. Указ. соч., с. 125; История Ирана. Отв. ред. Иванов

М. С., М., 1977, с. 254-255.
22. Усманов Н., Брагинский И. Литература Востока в новое время. М., 1975, с. 227.
23. Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 150:
24. Տե՛ս Комиссаров Д. С. Зарождение просветительства в Иране. “Народы Азии и Африки”. М., 1974, №6, с.82.
25. Տե՛ս Белова Н. К., Никитина В. Б. Указ. соч., с. 125.
26. Талипов Н. А. Указ. соч., с. 66-67.
27. Там же, с. 74.
28. Nikki R. Keddie. Modern Iran: Roots and Result of Revolution, p. 431-432.
29. Талипов Н. А. Указ. соч., с. 58.
30. Бади Ш. М. Указ. соч., с. 101; Арабаджян З.А. Указ. соч., с. 20; Талипов Н. А. Указ. соч., с. 61.
31. Анаркулова Д. М. Указ. соч., с. 62.
32. Сеидов Р.А. Иранская буржуазия в конце XIX - начале XX века. М., 1974, с. 157; Анаркулова Д. М. Указ. соч., с. 65.
33. Анаркулова Д. М. Указ. соч., с. 66.
34. Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981, էջ 616:
35. Տե՛ս Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 154:
36. Տե՛ս Բախչինյան Ա., Հայազգի գործիչներ, Երևան, 2002, էջ 177:
37. Бади Ш. М. Указ. соч., с. 101
38. Белова Н. К. Никитина В. Б. Указ. соч., с. 125.
39. Анаркулова Д. М. Указ. соч., с. 66.
40. Талипов Н. А. Указ. соч., с. 51, 53, Арабаджян З. А. Указ. соч., с. 19; Кузнецова Н. Иран в первой половине XIX века. М., 1983, с. 176.
41. Տե՛ս Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 155, 157-258:
42. Նույն տեղում, էջ 156:
43. Նույն տեղում, էջ 157:
44. Նույն տեղում, էջ 159:
45. Ахундов М. Ф. Избранные философские произведения. М., 1962, с. 318; Бади Ш. М. Городские средние слои Ирана, М., 1977, с. 101.
46. Анаркулова Д. М. Указ. соч., с. 67.
47. Анаркулова Д. М. Указ. соч., с. 67; Талипов Н. А. Указ. соч., с. 55.
48. Бади Ш. М. Городские средние слои Ирана, М., 1977, с. 101.
49. Сеидов Р.А. Указ. соч., с. 157.
50. Տե՛ս Талипов Н. А. Указ. соч., с. 53, 54; Анаркулова Д. М. Указ. соч., с. 65.
51. Арабаджян З. А. Указ. соч., с. 19.
52. Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 166-167:
53. Blunt W. S. Secret History of the English occupation of Egipt. London, 1907, p. 83, Талипов Н. А. Указ. соч., с. 68.
54. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 48, Ильин Е. Т. Из истории масонства в Персии. “Древности восточные”, том 4, М., 1913, с. 18; Анаркулова Д. М. Указ. соч., с. 69; Талипов Н. А. Указ. соч., с. 54; Арабаджян З. А. Указ. соч., с. 20.
55. Белова Н. К., Никитина В. Б. Указ. соч., с. 125-126, Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 155-159:
56. Blunt W. S. Secret History ..., էջ 68:
57. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 48; Анаркулова Д. М. Указ. соч., с.72, 112:
58. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 201.
59. Օգյուստ Կոնտը հասարակության առաջընթացի գլխավոր պայմանը համարում էր սոցիալական էվոլյուցիան, որի հիմքում ընկած է մտավոր և բարոյական կա-

տարելագործումը: Ըստ նրա, սոցիալական զարգացումը կրում է խաղաղ, ոչ հակասական բնույթ, ենթադրում է հաջորդականություն, բացառում կտրուկ թռիչքները և տեղաշարժերը: Տե՛ս Асмус В. Ф. Огюст Конт., М., 1984, Милль Д. С. Огюст Конт и позитивизм. Пер. с. англ. М., 2011.

60. Ջոն Միլլը հանդես էր գալիս քաղաքական և տնտեսական ազատությունների օգտին, պաշտպանում մարդու ազատ մտածելու և գործելու իրավունքը, քննադատում գրաքննությունը, գույքային անհավասարությունը: Տե՛ս Аникин А. В. Джон Стюарт Милль, М., 1975, с. 279-287; Блауг М., Джон Стюарт Милль. М., 1994, с. 164-206.
61. Анаркулова Д. М. Указ. соч., с. 81; Талипов Н. А. Указ. соч., с. 57.
62. Талипов Н. А. Указ. соч., с. 55
63. Арабаджян З. А. Указ. соч., с. 19; Ибрагимов Т. А. Указ. соч., с. 42-63.
64. Ильин Е. Т. Из истории масонства в Персии,- “Древности восточные”, том 4, М., 1913, с. 17-20.
65. Белова Н. К. Никитина В. Б. Указ. соч., с. 126-127.
66. Анаркулов Д. М. Указ. соч., с. 70.
67. Анаркулова Д. М. Указ. соч., с. 118.
68. Там же, с. 72.
69. Там же, с. 119.
70. Талипов Н. А. Указ. соч., с. 55.
71. Там же, с. 55.
72. Анаркулова Д. М. Указ. соч., с. 74, Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 155:
73. Кузнецова Н. Указ. соч. с. 171.
74. Анаркулова Д. М. Указ. соч., с. 73.
75. Տե՛ս Nikki Keddie., Religion and Rebelion in Iran. The Tobacco Protest of 1891-1892. London, 1966; Hamid Algar. Religion and State in Iran. 1785-1906. Berkeley, 1969.
76. Տե՛ս Brown E. G. The Persian Revolution of 1905-1909. Cambridge, 1910, p. 38; Сеидов Р.А. Указ. соч., с. 159.
77. Տե՛ս История Ирана. Отв. сек. Иванов М. С., М., 1978, с. 260; Анаркулова Д.М. Указ. соч., с. 73.
78. Анаркулова Д. М. Указ. соч., с. 74:
79. Տե՛ս Algar Hamid. Mirza Melkum Khan, p. 10.
80. Տե՛ս Ազատ»ան Թ., Տատ»ան գ»րդաստանը և իր ականավոր դէմք»ը, Իսթանպուլ, 1952:
81. Աննա Նակիպ, նշվ. աշխ., էջ 26:
82. Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1955, հունիս, թիվ 6, էջ 94; Պէյլէրեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակը ԺԹ դարուն: «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրութ, 2001, էջ 157-158, Jamgochyan O., Նշվ. աշխ., էջ 80-82:
83. Талипов Н. А. Указ. соч., стр. 55.
84. Анаркулова Д. М. Указ. соч., стр. 84:
85. Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 153:
86. Бади Ш. Указ. соч., с. 102-103.
87. Талипов Н. А. Указ. соч., с. 63.
88. Там же, с. 71.
89. Дорри Дж. Указ.соч., с. 55.
90. Будагян А. А. Указ. соч., с. 99.
91. Комиссаров Д.С., Указ. соч., с. 38.
92. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 190.

93. Ибрагимов Т. А. Указ. соч., с. 59-60.
94. Агахи А. М. Распространение идей марксизма – ленинизма в Иране. Баку, 1961, с. 38.
95. Анаркулова Д. М. Указ. соч., с. 95-96:
96. Sykes P., A History of Persia, vol. 2, London, 1921, p. 397-398; Сеидов Р. А. . Указ. соч., с.162.
97. Чайкин К. Краткий очерк новейшей персидской литературы, М., 1928, с. 18; Сеидов Р. А. Указ. соч.,с.160.
98. Algar Hamid, Mirza Malkum Khan, p. 197-198:
99. Комиссаров Д.С., Указ. соч., с. 83.
100. Տե՛ս Browne E. G. The Persian Revolution of 1905-1909. Cambridge, 1910, p. 35, 42.
101. Анаркулова Д. М. Указ. соч., с. 101:
102. Ибрагимов Т .А. (Шагин), Политические партии, организации и общества Ирана (1858-1817гг.), Баку, 1972, с. 59.
103. Анаркулова Д.М. Указ. соч., с. 105:
104. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 197-198; Анаркулова Д.М. Указ. соч., с. 108.
105. Ибрагимов Т .А. (Шагин), Указ. соч., с. 35.
106. Белова Н. К., Никитин В. Б. Указ. соч., с. 29.
107. Algar Hamid. Mirza Melkum Khan, p. 115; Анаркулова Д.М. Указ. соч., с. 109.
108. Տե՛ս Сеидов Р.А. Иранская буржуазия в конце XIX- начале XX вв., М., 1974, с. 159.
109. Анаркулова Д.М. Указ. соч., с. 113.
110. Там же, с. 116.
111. Там же, с. 114-115:
112. Анаркулова Д .М. Указ. соч., с. 97, 127; Бади Ш. Указ. соч., с. 104.
113. Nikki R. Keddie, նշվ. աշխ., էջ 432.
114. Раванди-Фадаи Л. М. Политические партии и группировки Ирана. М., 2010, с. 14.
115. Սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցլը (1860-1904) Գերմանիայում գործող «Բնայ բրիտ» օթյակի անդամ էր: Նա հրեաների համար «բացարձակ անսովոր բնույթի համաշխարհային կերպար էր», իսկ ոմանց համար նույնիսկ «փրկիչ» ու «մարգարե»: Տե՛ս Ռիդ Դուգլաս, Գաղտնախորհուրդ Սիոնը, Երևան, 2012, էջ 344; Джонсон П. Популярная история евреев. Пер. с. англ., М., 2003, с. 455.
116. Теодор Герцль и армянский вопрос. Научно-информационный бюлетень сектора научной информации по общественным науком АН Арм. ССР, N 7(39), Ереван, 1979, с. 19-29.
117. Иванов М. С. Очерки истории Ирана, М., 1952, с. 204-205; История Ирана, М., 1977, с. 272; Анаркулова Д.М. Указ. соч., с. 116.
118. Талипов Н.А. Указ. соч., с. 59.
119. Там же, с. 69.
120. Աննա Նակիպ, նշվ. աշխ., էջ 27:
121. Տե՛ս Եգանյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 153:
122. Algar Hamid. Mirza Malkum Khan, p. 248.
123. Анаркулова Д.М. Указ. соч., стр. 132; Талипов Н.А. Указ. соч., с. 76; Եգանյան Հ.Մ., Նշվ. աշխ., էջ 166:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Միրզա Մալքոմ խանի մասոնական հայացքները և գործունեությունը
Ֆելիքս Մովսիսյան

Միրզա Մալքոմ խանը XIX դարի վերջի – XX դարի սկզբի խոշոր պետական և հասարակական գործիչ է, Իրանի հայ համանքի ներկայացուցիչ: Նա երևելի լուսավորիչ էր, ում համեմատում էին ֆրանսիացի լուսավորիչներ Վոլտերի և Ռուսոյի հետ: Մալքոմ խանին համարում էին Իրանի ամենակրթված մարդկանցից մեկը, եթե ոչ ամենակրթվածը, մեծ բարենորոգիչ, ազատության համար պայքարի առաջնորդ և սահմանադրական շարժման նախահայր: Նա հմուտ դիվանագետ էր, հայտնի հրապարակախոս, «Կանուն» թերթի հրատարակիչն ու խմբագիրը: Մալքոմ խանը նշանավոր մասոն էր, ազատ որմնադիրների գաղափարների առաջին տարածողն Իրանում, դրանց կրողն ու ջատագովը: Նա իրանական առաջին՝ «Ֆարամուշ խանե» մասոնական օթյակի հիմնադիրն ու գլխավոր գաղափարախոսն էր:

РЕЗЮМЕ
Масонские взгляды и деятельность Мирзы Мальком-Хана
Феликс Мовсисян

Ключевые слова: просветитель, реформатор, государственный деятель, дипломат, публицист, Фарамуш-ханэ, масон, ложа, "Канун".

Мирза Мальком-хан – крупный государственный и общественный деятель второй половины XIX – начала XX вв., представитель армянской диаспоры Ирана. Он – видный иранский просветитель, которого сравнивали с французскими философами Вольтером и Руссо. Мальком-хана считали одним из самых образованных людей Ирана, если не самым образованным, великим реформатором, лидером борьбы за свободу и родоначальником конституционного движения. Он был искусным дипломатом, известным публицистом, издателем и редактором газеты "Канун". Мальком-хан известен как знаменитый масон, носитель и апологет идей вольных каменщиков и первый их проводник в Иране. Он – создатель и главный идеолог первой иранской масонской ложи "Фарамуш-ханэ".

SUMMARY
Mirza Malqom Khan's Masonic Views and Activities
Felix Movsisyan

Keywords: enlightener, reformer, statesman, diplomat, publicist, "Pharamoush Khane", mason, lodge, "Kanun".

Mirza Malqom Khan was a great Iranian-Armenian social and public figure of the second half of the 19th and the beginning of the 20th century. He was one of the most eminent enlighteners of his time, who was compared with French enlighteners Volter and Rousseau. Malqom Khan was considered one of the most educated people in Iran, if not the most educated one, a great reformer, the leader of the struggle for freedom and predecessor of the Constitutional Movement. He was a skilled diplomat, outstanding publicist, the publisher and editor of the "Kanun" newspaper. Malqom Khan was a distinguished mason, an adherent and advocate of freemasons' ideology and the first person to disseminate it in Iran. He was the founder and chief ideologist of the first mason lodge "Pharamoush Khane" in Iran.